

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի այլընտրանքը
փոփոխվող աշխարհում

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4
Ա 161

Արրահամյան Էդուարդ, Մելիքյան Գևորգ
Ա 161 Համապարփակ անվտանգություն: Հայաստանի այլընտրանքը
փոփոխվող աշխարհում/ Է. Արրահամյան, Գ. Մելիքյան.- Եր.:
Newmag, 2025.- 204 էջ

Հեղինակները վերլուծում են Հայաստանի անվտանգային մոդելների հիմնական թերությունները և խոցելի կողմերը, արձանագրում, որ եղած անվտանգային ճարտարապետությունը ծախսող է իր հիմնական առաքելությունը՝ պետության ռազմավարական շահերի պաշտպանությունը:

Նրանք ընդգծում են, որ անհրաժեշտ է ստեղծել և ներդնել համապարփակ անվտանգության համակարգ (ՀԱՀ), որը պետք է ունենա ռազմական, ինստիտուցիոնալ, գաղափարական, տնտեսական, տեղեկատվական, քաղաքացիական և միջազգային բաղադրիչներ: Ուժի տեսական հայեցակարգի և փոքր պետությունների փորձի քննադատական հետազոտության հիման վրա աշխատությունն առաջարկում է նորարար մոտեցում: Այն միավորում է ազգային դիմակայունությունը, ռազմավարական կառավարումը և արտաքին քաղաքական հավասարակշռումը՝ երկարաժամկետ ինքնիշխանություն և կայունություն ապահովելու նպատակով:

ՀԱՀ կոնցեպտը փոփոխվող աշխարհում Հայաստանի տեղը և դերը վերախմաստավորելու կոչ է: Այն առաջարկում է դուրս գալ անցյալի խորհրդային հարացույցից ու կառուցել մի համակարգ, որը փոքր պետությանը թույլ կտա դիմակայել ավանդական և հիբրիդային հիմնախնդիրներին:

Անվտանգային նոր մտածողություն ներշնչող այս գիրքն աղբյուր է որոշում կայացնողների, հետազոտողների և բոլոր նրանց համար, ովքեր ձգտում են անվտանգային նոր միջավայր հիմնել:

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4

ISBN 978-9939-967-84-4

Էդուարդ Արրահամյան, Գևորգ Մելիքյան «Համապարփակ անվտանգություն. Հայաստանի այլընտրանքը փոփոխվող աշխարհում» © 2025, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հրատարակության իրավունքները պատկանում են «Արար»
հիմնադրամին: Գիրքը հրատարակվել է Newmag & Friends ծրագրով:

Բովանդակություն

Նախաբան	7
----------------------	---

Ներածություն	11
---------------------------	----

Ինչո՞ւ ծախողեց Հայաստանի Հանրապետության անվտանգային ճարտարապետությունը	14
---	----

Գլուխ Ա

Համապարփակ անվտանգության համակարգ	29
Ուժի կոտակումն ու գործածումը՝ որպես խորքային գործառույթ և գոյատևման հարացույց	38
Ասիմետրիայի նվազեցումը՝ որպես գոյաբանական սպառնալիք ունեցող փոքր պետության խորքային նպատակ	52

Գլուխ Բ

Ինչպե՞ս հասկանալ Համապարփակ անվտանգության համակարգը փոքր պետությունների համար	59
Հայաստանը՝ որպես փոքր պետություն. իրավիճակային ռազմավարական գնահատական	88

Գլուխ Գ

Իսրայելական փորձի վերլուծությունը Հայաստանի համար հնարավոր դասեր քաղելու համատեքստում	101
--	-----

Վերջաբանի փոխարեն	169
--------------------------------	-----

Հավելված Քաղաքականության 17 առաջարկ	171
Ծանոթագրություններ	193

ՆԱԽԱԲԱՆ

Ինչ նպատակով է կատարվել այս հետազոտությունը

Հայաստանի անվտանգային համակարգը ծգնաժամի մեջ է: Մենք տեսանք, թե ինչպես այն չկարողացավ ապահովել երկրի պաշտպանունակությունը, ռազմավարական ճկունությունը և կայուն զարգացումը: Սա ոչ թե պարզապես մեկ պատերազմում պարտության հետևանք էր, այլ խորքային, համակարգային ծախողման, որի պատճառները պետք է հասկանալ, իսկ լուծումները մշակել նոր տեսանկյունից: Այս հետազոտությունը չի սահմանափակվում ախտորոշումով, այլ առաջարկում է նոր, համապարփակ անվտանգության համակարգ, որը համապատասխանում է Հայաստանի ներկա և ապագա մարտահրավերներին:

Ինչո՞ւ է պետք կարդալ այս գիրքը

Եթե կարծում եք, թե Հայաստանը կարող է շարունակել գործել նախկին տրամաբանությամբ և ուրիշ արդյունք ակնկալել, ապա այս գիրքը ձեզ համար չէ:

Այս ուսումնասիրությունն առաջարկում է վերլուծական խորություն, ռազմավարական պատկերացում և գործնական ուղիներ, որոնք պետք է գիտակցի յուրաքանչյուր պետական

գործիչ, ռազմական ղեկավար, վերլուծաբան և անհատ, որ հասկանում է, որ անվտանգությունը միայն բանակի խնդիր չէ, այլ հանրային դիմակայունության, տնտեսական հզորության, տեխնոլոգիական առաջընթացի և ռազմավարական հեռատեսության համադրություն:

Ինչպե՞ս պետք է կիրառել այս գիտելիքը

Սա ակադեմիական ուսումնասիրություն չէ, որ դրվի գրադարակում: Այս աշխատանքը գործիք է նոր անվտանգային մտածողության ձևավորման համար:

- Պետական որոշում կայացնողներն այստեղ կգտնեն խաղաղության և պատերազմի պայմաններում ճիշտ ընտրություն կատարելու ուղենիշեր:
- Ռազմավարները կտեսնեն՝ ինչպես պետք է կառուցվի ուժի կուտակման և գործադրման համակարգը, որպեսզի Հայաստանը դառնա ոչ թե սպառնալիքներին արձագանքող պետություն, այլ իր պայմանները թելադրող սուբյեկտ:
- Հանրային հատվածի ներկայացուցիչները, գիտնականներն ու տեխնոլոգիական համայնքը կգտնեն՝ ինչպես պետք է փոխկապակցվեն պաշտպանական, տեղեկատվական ու տնտեսական ռեսուրսները՝ համապարփակ անվտանգության ստեղծման համար:
- Վերջում ներկայացված քաղաքական 17 առաջարկները ծառայելու են որպես կոնկրետ գործողությունների

Ճանապարհային քարտեզ այն առաջնորդների համար,
որոնք համարձակություն ունեն գործելու:

Մենք չենք կարող վերապրել հին սխալները: Այս հետազո-
տությունն առաջին քայլն է դեպի նոր մտածողություն, նոր
մոտեցումներ ու նոր համակարգ:

Պատրաստվեք ոչ միայն կարդալու, այլև մտածելու,
վիճարկելու և գործելու:

Արմեն Խաչիկյան

*«Արար» քաղաքակրթական հետազոտությունների
հիմնադրամի գործադիր փնտրեն*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Խաղաղության պահպանման ամենաարդյունավետ փորձերակը
պատերազմին մշտապես պատրաստ լինելն է:
Ջորջ Վաշինգտոն, ԱՄՆ նախագահ, 1790*

Սույն հետազոտության գլխավոր նպատակն է հասկանալ՝ որոնք են Հայաստանի Հանրապետության համար նոր, Համապարփակ անվտանգության համակարգի (ՀԱՀ) ներդրման խոչընդոտներն ու մարտահրավերները և ինչպես օգնել Հայաստանին դրանք հաղթահարել՝ ընդգծելով ՀԱՀ որդեգրման ճանապարհին եղած առաջնահերթությունները: Սույն աշխատանքը միտված է դառնալ ներկայումս թափ առնող Հայաստանի անվտանգային մոդելի ստեղծման հանրային-քաղաքական դիսկուրսի կարևոր գիտակիրառական խթան-բաղադրիչը՝ խրախուսելով մասնագիտական, հանրային ու պետական շրջանակների համընդհանուր տեսլականի շուրջ համակարգված ու համատեղ աշխատանքը:

Անվտանգությունը յուրաքանչյուր, հատկապես ակնհայտ թշնամական միջավայրում գտնվող պետության հենասյունն է, ինչպես նաև պետության արդյունավետ կառավարման կարևորագույն բաղադրիչը: Այն բոլոր մակարդակներում կայունության և զարգացման գլխավոր նախապայմանն է և դրա խորքային ընկալումը, որ բերում է ազգային և ռազմավարական շահերի սպասարկման գիտակցության և

աներկբա հավատարմության: Արժանահավատ և կենսունակ անվտանգային համակարգի բացակայությունը հանգեցնում է պետական համակարգի էական ապակայունացման՝ արտաքին միջամտությունների, միգրացիայի, տնտեսական անորոշության և հասարակական պառակտումների պայմաններում անգամ չգոյության և վերացման:

Վերջին տասնամյակներում Հայաստանի Հանրապետությունը, ինչպես և մի շարք այլ փոքր պետություններ, կանգնած է բազմաթնային անվտանգային ուղղակի և անուղղակի սպառնալիքների առջև: Գոյատևելու և կայուն զարգացման ուղիներ փնտրելու հարցում Հայաստանը ստիպված է դիմակայել ոչ միայն անմիջական ռազմական և քաղաքական վտանգների, այլև միջազգային և տարածաշրջանային ազդեցությունների ավելացող ծավալին: Նման բարդ և փոփոխվող միջավայրում Հայաստանի համար կենսական է դառնում նոր, համալիր և ռազմավարական անվտանգության համակարգի ձևավորումը, որը կներառի ոչ միայն պետական, այլև հանրային ու ոչ պետական ոլորտները՝ ներառյալ հասարակության դիմակայունության բարձրացումը և բոլոր մակարդակներում անվտանգության բազմաշերտության ապահովումը:

Հայաստանի անվտանգային ծարտարապետության խընդիրները շատ դեպքերում պայմանավորված են պատմական հանգամանքներով: Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունը, որպես փոքր պետություն, հայտնվեց բարդ աշխարհաքաղաքական և ռազմական իրավիճակում՝ չընդապատված լինելով հիմնականում թշնամական պետություններով: Այդուհանդերձ, այն, ի համեմատ իր փոքր հարևանների, կարողացավ որոշակիորեն ձևավորել

աշխատող նորանկախ համակարգ, զինված ուժեր և արդյունավետորեն արտաձել ուժ՝ փրկելով հայության հայրենիքի անբաժանելի մասնիկ Արցախը հայաթափումից, իր տիրապետության տակ առնելով շատ ավելի մեծ նյութական ռեսուրսներ, տարածքներ ու աշխարհաքաղաքական արժեկշռի ներուժ, քան նախատեսված էր խորհրդային սահմանների շրջանակում:

Չնայած անկախության այս նախնական կարևոր հաջողություններին՝ Հայաստանն այդպես էլ չունեցավ լիարժեք ձևավորված ռազմավարություն, քաղաքական ճիշտ դիրքավորում և տեսլական, որոնք կհամապատասխանեին իր՝ 1994-ի դրությամբ ձեռք բերած ռազմավարական դիրքին և առկա սպառնալիքներին: Սա, ի շարս այլոց, պայմանավորված էր հատկապես ինտելեկտուալ կարողությունների, խորհրդային ինտեգրացիայի, հետգաղութարարական բարդությաների, արտաքին ճնշումների, նաև պլանավորման համակարգի, տվյալների վերլուծության, արդյունավետ պետականաշինության, արտաքին քաղաքականություն վարելու մասնագիտական, նյութական ու ինտելեկտուալ ռեսուրսների խիստ ոչ բավարար լինելով:

Հայաստանյան անվտանգության ճարտարապետության ներկայիս վիճակը, հատկապես 2020-ին Ադրբեյջանի սանձազերծած պատերազմի խորապատկերին, բացահայտում է պետության անկախությունից ի վեր գործող համակարգի խորքային թերությունները, թերացումները, բացթողումները և անցյալի բազմաթիվ սխալ որոշումների հետևանքները: Արցախի կորստի, ծախողած արտաքին քաղաքականության, նաև աշխարհաքաղաքական նոր մարտահրավերների

առաջացման և տարածաշրջանային անվտանգության ճըգնաժամերի խորապատկերին անսակարկելի են դարձել անվտանգային քաղաքականության վերանայումը և նոր համապարփակ անվտանգության համակարգի ներդրումը, որը կրիտեր ստեղծված իրողություններից, կրավարարեր Հայաստանի անվտանգային պահանջները և ներհատուկ կլիներ հենց միայն Հայաստանին: Նոր համակարգը պետք է հիմնըված լինի ռազմավարական և անվտանգային որակապես նոր մտածողության վրա և համապատասխանի ժամանակակից բոլոր սպառնալիքների բնույթին և մարտահրավերներին:

Ինչո՞ւ ձախողեց Հայաստանի Հանրապետության անվտանգային ճարտարապետությունը

Հայաստանի ներկայիս անվտանգային ճարտարապետությունը բազմիցս փորձության է ենթարկվել, և վերջին տարիների իրադարձությունները ցույց տվեցին, որ այդ համակարգը պատրաստ չեղավ և չէր էլ կարող լիովին դիմակայել ժամանակակից մարտահրավերներին: Անվտանգության դաշտում հայտնված գոյաբանական հիմնախնդիրները, համակարգային սխալները և ռազմավարական մտածողության խառն բացակայությունը մեզ ստիպում են գտնել նոր լուծումներ:

Նախ, պետք է ընդունել, որ Հայաստանի ռազմական վերնախավը երբեք չի ունեցել և չի էլ ձգտել մշակել ռազմավարական հստակ պլանավորում անվտանգության բնագավառում: Սա կապված է ոչ միայն ռազմաքաղաքական և

կադրային սխալների, այլև անվտանգության տարբեր ոլորտների միջև համագործակցության և համադրման բացակայության հետ: Ուղղաձիգ կառավարումը, օլիգարխիկ համակարգի ներթափանցվածությունն անվտանգային ոլորտ, կոռումպացված քաղաքական և ռազմական վերնախավերը, պետական ինստիտուտների ոչ արդյունավետ աշխատանքը և համակարգային մի շարք այլ խնդիրներ հանգեցրին սպառնալիքների և ռիսկերի կառավարման գրեթե իսպառ բացակայության:

Պարզ դարձավ, որ Հայաստանի Հանրապետության՝ միմյանց հաջորդող կառավարող ընտրանին կամ խորապես չի ընկալում, կամ ունակ չէ իրականացնել միջազգային հարաբերությունների՝ յուրաքանչյուր պետության ամենահիմնարար գործառույթը՝ ուժի հետևողական կուտակումը և համապատասխան պահին ուժի արդյունավետ արտածումը՝ պաշտպանելու ազգային, ռազմավարական շահերը, տարածքը և քաղաքացիներին՝ ազդեցություն արտածելով իր իսկ անմիջական միջավայրում: Դրան գումարվում է այն անթույլատրելի մոտեցումը, որ անվտանգային բոլոր հարցերը պետք է «լուծվեն» ՌԴ ղեկավարության հետ ձեռքբերված, ըստ էության միակողմանի կախվածություն ենթադրող պայմանավորվածությունների մակարդակում: Հայաստանի անվտանգային ճարտարապետությունը, պաշտպանական փիլիսոփայություն ու Զինված ուժերի (ԶՈՒ) համակարգը մեծապես հիմնված էին Ռուսաստանի հետ բազմաթույլ և բազմամակարդակ դաշինքային հարաբերությունների վրա: Անվտանգային ու քաղաքական ոլորտների ռուսաստանակենտրոնությունը հայեցակարգային ձևակերպում է ստացել